3134

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«09» 07 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0119-21

Ձեռնարկողը՝ **«ՏՆԱՇԻՆ ԿՈՄՊ» ՍՊԸ**
ք. Սևան, Չարենցի փ., 179բ

Գործունեությունը՝ ***Զովաբերի պեմզային ավազների հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Գեղարքունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0119-21
<09**>** 07 **2021թ.**

Գեղարքունիքի մարզի Զովաբերի պեմզային ավազների հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության

Ներածական մաս.

Ձեռնարկող՝ «ՏՆԱՇԻՆ ԿՈՄՊ» ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/, /Ա կատեգորիա/

Տեղադրման վայրը՝ Գեղարքունիքի մարզ, Զովաբեր համայնք

«ՏՆԱՇԻՆ ԿՈՄՊ» ՍՊ ընկերության կողմից /այսուհետ՝ Ընկերություն/ նախատեսվում է Գեղարքունիքի մարզի Զովաբերի պեմզային ավազների հանքավայրից օգտակար հանածոյի (պեմզային ավազ) արդյունահանում: Նախագիծը մշակված է Ընկերության տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2)-րդ կետի գ. ենթակետի, ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Նկարագրական մաս.

Զովաբերի պեմզային ավազների հանքավայրը գտնվում է Գեղարունիքի մարզի Սևանի տարածաշրջանում, Զովաբեր (Յայջի) գյուղից դեպի հարավ-արևելք 0.2 կմ հեռավորության վրա: Հանքավայրի կապը Սևան քաղաքի հետ, մայրաքաղաքի և այլ բնակավայրերի հետ իրականացվում է բարեկարգ ասֆալտապատ

ավտոճանապարհով: Հանքավայրի մոտ բնակավայրեր են Դդմաշենը՝ 2.5կմ, Ջրառատը՝ 3.0կմ, Սևանը՝ 16կմ և Հրազդանը՝ 10կմ հեռավորությամբ:

Լեռագրական տեսակետից հանքավայի տարածքը ներկայացված է լեռնային ռելիեֆով, բացարձակ բարձրությունների 1720-1780մ տատանումների սահմաններում: Հանքավայրի հիմնական ջրային զարկերակը Հրազդան գետն է, որը հանքավայրից գտնվում է 200մ հեռավորության վրա:

Շրջանի տարածքը հիմնականում անտառազուրկ է: Անտառային զանգվածները տարածվում են սարերի միայն հյուսիսային լանջերում: Կլիման չափավոր մայրցամաքային է: Օդի ջերմաստիճանը ամռանը բարձրանում է մինչև +25^{0}C, իսկ ձմռանը իջնում է մինչև -25^{0}C: Տեղումների տարեկան միջին քանակը տատանվում է 400-500մմ: Հանքավայրի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են պալեոգենի, նեոգենի և չորրորդականի հասակի ապարներ:

Հանքավայրի երկրաբանական կտրվածքը հետևյալն է (ներքևից վերև). ա) պորֆիրիտներ՝ միջին էոցենի, բ) կավային ավազներ և պեմզանյութեր՝ մեոտիս-պոնտի, գ) հրաբխային խարամներ՝ միջին չորրորդական, դ) անդեզիտաբազալտներ՝ վերին չորրորդական, ե) ժամանակակից նստվածքներ:

Գեղարքունիքի մարզի Զովաբերի պեմզային ավազների հանքավայրի պաշարները հաստատվել են ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ՕՀՊԳ-ի կոմից 2008 թվականի հոկտեմբերի 13-ին, թիվ 182 արձանագրությամբ՝ 01.04.2008 թվականի դրությամբ: Հաստատվել է պեմզային ավազների հաշվեկշռային պաշարներ A կարգի 101.4 հազ մ^3 քանակով: Համաձայն «Անօրգանական ծակոտկեն լցանյութեր թեթև բետոնի համար» ГОСТ 9757-83-ի և «Խիճ և ավազ ծակոտկեն լեռնային ապարներից» ԳՈՍ 22263-ի Զովաբերի պեմզային ավազները կարելի է օգտագործել շինարարության մեջ, որպես վերջնարտադրանքների արդյունահանման համար:

Հանքավայրի անկյունային կոորդինատներն են WGS -84 համակարգով՝

1. X= 4492397 Y=8481191
2. X= 4492458 Y=8481258
3. X= 4492488 Y=8481341
4. X= 4492454 Y=8481334
5. X= 4492369 Y=8481281
6. X= 4492307 Y=8481246
7. X= 4492258 Y=8481220
8. X= 4492298 Y=8481123

Բացահանքի օտարման տարածքի մակերեսն է՝ 2.11 հա:

Նախագծվող բացահանքը վերջնական դիրքում կունենա հետևյալ պարամետրերը.

- ամենամեծ երկարությունը՝ 265մ,
- ամենամեծ լայնությունը՝ 105մ,
- մակաբացման ապարների միջին հզորությունը՝ 0.7մ,
- բացահանքի ամենամեծ խորությունը՝ 10.0մ,
- օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակը՝ 101.4հազ.մ^3,
- օգտակար հանածոյի արդյունահանվող պաշարների քանակը՝ 84.2հազ.մ^3:

Համաձայն հաշվետվության, մակաբացման ապարները կտեղափոխվեն բացահանքի հարավային և հարավ արևելյան կողմերում ձևավորվող N1 և N2 ժամանակավոր լցակույտեր, որոնց քանակն է միասին՝ 13940մ^3:

Հանքավայրի բացումը նախատեսվում է սկսել 1768.5 հորիզոնից:

Բացահանքի սույն նախագծով նախատեսվում է հանքարդյունահանման աշխատանքները կատարել հորատասեպային եղանակով, շուրջտարյա աշխատանքային ռեժիմով՝ 260 օր: Աշխատանքային հերթափոխերի քանակը օրում ընդունվում է 1, հերթափոխի տևողությունը՝ 8.0 ժամ:

Սույն նախագծով նախատեսվում է՝

1. Հանքավայրը շահագործել բաց եղանակով, տարեկան 10140մ^3 արտադրողականությամբ /մարվող պաշար/:
2. Արդյունահանվող պաշարների քանակը կազմում է 84200մ^3:
3. Արդյունահանել տարեկան 8420մ^3 ծավալով պեմզային ավազ:
4. Ծառայման ժամկետն է 10 տարի:
5. Արդյունահանված օգտակար հանածոն տեղափոխել սպառողի ավտոինքնաթափով:
6. Մակաբացման ապարները՝ բուլդոզերով տեղափոխվում է հանքավայրի հարևանությամբ, արտաքին N1 և N2 լցակույտեր, հետագայում հնարավորություն ստեղծվելուց հետո՝ ներքին լցակույտ կատարելու համար:
7. Հանույթային աշխատանքները կատարել էքսկավատոր ավտոինքնաթափ, բուլդոզեր լեռնատրանսպորտային համալիրով:
8. Բացահանքի աշխատանքների կազմակերպման համար հանքավայրում կառուցել արտադրական հրապարակ՝ իր անհրաժեշտ կառույցներով:
9. Շահագործման ավարտից հետո կատարել հանքավայրի ռեկուլտիվացիա:

Հանքավայրի արդյունահանումը իրականացնելու համար անհրաժեշտ է բացահանքի վրայից հեռացնել 13940մ^3 մակաբացման ապարներ, որոնք իրենցից ներկայացնում են բացահանքը ծածկող 4010մ^3 հողաբուսական շերտով և 9930մ^3 ծավալով էլյուվիալ-դելյուվիալ առաջացումներ: Մակաբացման միջին գործակիցը տրամադրվող տարածքում ստացվել է՝ 13940 : 84200 = 0.17մ^3/մ^3 :

Բացահանքի շահագործման ընթացքում նախատեսվում են օգտակար հանածոյի անխուսափելի կորուստներ (նախագծային կորուստներ), որոնք բաժանվում են երկու խմբերի. կորուստներ, որոնք պայմանավորված են հանքավայրի լեռնատեխնիկական և շրջակա միջավայրի պայմաններով: Ընդամենը կորուստները կկազմեն՝ 17200 կամ 16.96%:

Հայցվող տարածքում հանքավայրը ծածկող հողային ծածկույթը՝ (երեսաշերտ), ներկայացված է հողաբուսական շերտով և էլյուվիալ-դելյուվիալ նստվածքներով (որոնք ներկայացված են ապարների կտորտանքներով, խառնված հողաբուսական և կավային զանգվածով), որոնք ներկայացված են 0.5մ-0.9մ, միջինում 0.5մ հզորությամբ: N1 լցակույտը ներկայացնում է հողաբուսական շերտը: Այդ հողաբուսական շերտի ծավալն է 4010մ^3 և պահեստավորվում է հետագայում կենսաբանական ռեկուլտիվացիոն աշխատանքներ կատարելու նպատակով: N2 լցակույտը իրենից ներկայացնում է օգտակար հաստաշերտը ծածկող ժամանակակից ապարներով, էլյուվիալ-դելյուվիալ նստվածքներ՝ ներկայացված տարբեր ապարների կտորտանքներով՝ 9930մ^3 ծավալով և 1055մ^3 ծավալով շահագործողական կորուստները, դրանք այն կորուստներն են, որոնք առաջանում են օգտակար հաստաշերտի տանիքը մակաբացման ապարներից մաքրելու ժամանակ: N2 լցակույտ տեղափոխվող ապարների քանակը միասին կկազմի 14995մ^3: Հնարավորություն ստեղծվելուց հետո շահագործման 2-րդ տարուց սկսած դրանք կտեղափոխվի բացահանքի բացված հանքաստիճանի վրա, կլցվի սկզբում N2 լցակույտի ապարները ներքին լցակույտի տեսքով, նրա վրա հողաբուսական շերտը և կհարթեցվի: Ներքին լցակույտի բարձրությունն է h=0.8մ:

Վերջնական դիրքում լցակույտը երկյարուսով է, բացահանքի հարավային մասում՝ 3.5մ միջին բարձրությամբ, որի վերին մակերեսը կազմում է 340մ^2, իսկ ստորին հիմքի մակերեսը՝ 1100մ^2: 1743.5մ բարձրության հորիզոնը ամբողջությամբ կհարթեցվի շահագործման ավարտից հետո ռեկուլտիվացիոն աշխատանքների ժամանակ:

Բացահանքում արդյունահանումը կատարվելու է առանց հորատապայթեցման աշխատանքների կիրառման, էքսկավատոր-ավտոինքնաթափ լեռնային համալիրի միջոցով:

Բացահանքից պեմզային ավազների տեղափոխումը մինչև 0.7կմ հեռավորությամբ արտադրամաս՝ շինարարական սալիկների ստացման համար, նախատեսվում է իրականացնել КамАЗ-5511 մակնիշի ավտոինքնաթափով: Տարողությունը՝ 10տ կամ 6.6մ^3 ավտոինքնաթափով:

Բացահանքի ջրամատակարարումը կկատարվի բացահանքի արդյունաբերական հրապարակը խմելու ջրով ապահովելու, ինչպես նաև փոշենստեցման նպատակով աշխատանքային հրապարակների, ավտոճանապարհների և լցակույտի մակերևույթի ջրման համար: Խմելու ջուրը բերվելու է կցովի ջրի ցիստեռնով, իսկ տեխնիկական ջուրը՝ ջրցան լվացող ավտոմեքենայով, պայմանագրային հիմունքներով:

Հանքավայրի հիդրոերկրաբանական պայմանների համաձայն, հանքավայրի տարածքում գետնաջրերը բացակայում են, ջրային ռեսուրսների աղտոտում չի կանխատեսվում, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով՝ արտահոսքեր չեն նախատեսվում: Հետևաբար բացահանքում ջրհեռացնող կառուցվածքներ չեն նախատեսվում: Անմիջապես բացահանքի տարածքը թափվող մթնոլորտային տեղումներից գոյացած ջրերը կհեռացվեն ինքնահոս կերպով և զանգվածի բնական ճեղքերի ցանցի միջով կներծծվեն դեպի խորքերը:

Հանքավայրի շահագործման ընթացքում մթնոլորտ արտանետվող վնասակար գազերի և փոշու աղբյուր են՝ բացահանքը, տեխնիկական և տրանսպորտային միջոցները, լցակույտերը:

Օդային ավազան արտանետվող վնասակար նյութերն են՝ անօրգանական փոշին, ազոտի և ածխածնի օքսիդները, ածխաջրածինները, պինդ մասնիկները (մուր):

ՇՄԱԳ-ում հաշվարկվել են արտանետումների քանակները, որոնց ազդեցությունը գնահատելու համար կատարվել է դրանց ցրման արդյունքում սպասվող գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկ, համաձայն որի արտանետվող նյութերի գետնամերձ կոնցենտրացիաների առավելագույն արժեքները՝ հաշվի առնելով նաև ֆոնային ցուցանիշները, չեն գերազանցում բնակավայրերի համար սահմանված ՍԹԿ-րը:

Բացահանքի լեռնակապիտալ աշխատանքների և շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են բնապահպանական միջոցառումների ծրագիր, ուղղված՝ մթնոլորտային օդի, հողային, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության պահպանությանը, այդ թվում՝

- տարվա չոր և շոգ եղանակին՝ փոշենստեցման նպատակով, փոշեառաջացման օջախների (աշխատանքային հրապարակներ, լցակույտեր, մուտքային և դեպի լցակույտեր տանող ավտոճանապարհ) պարբերաբար ջրում,
- տեխնիկատրանսպորտային միջոցների աշխատանքի ապահովում ձայնախլացուցիչ սարքավորումներով՝ աղմուկի մակադակի նվազեցման նպատակով,
- դիզելային շարժիչներով աշխատող լեռնատրանսպորտային սարքավորումների վրա զտիչների տեղադրում՝ արտանետումների նվազեցման նպատակով,

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

- արտադրական հրապարակում նավթամթերքների պահեստավորում և պահում հատուկ հատկացված տեղում,
- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ երկրորդական վերամշակման համար,
- հնամաշ դետալների ու մասերի հավաքում և հանձնում որպես մետաղական թափոն,
- կենցաղային աղբի տեղափոխում մոտակա աղբահավաք կետեր,
- խախտված տարածքների վերականգնում/ռեկուլտիվացիա:

ՇՄԱԳ-ում նախատեսվել են նաև միջոցառումներ, ուղղված՝ աշխատանքային միջավայրում աշխատողների անվտանգությանը, արտակարգ իրավիճակների արձագանքմանը, հնարավոր ազդեցությունների մեղմմանն ու կանխարգելմանը: Բոլոր միջոցառումներն իրենց գործողություններով ամփոփվել են բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

Արդյունահանվող տարածքներից հողային շերտի հեռացումն ու դրա պահպանումը բացահանքի տարածքից կատարվելու է ՀՀ կառավարության 08.09.2011թ. թիվ 1396-ն և 02.11.2017թ. թիվ 1404-ն որոշումների պահանջներին համապատասխան:

Բացահանքի շահագործման աշխատանքների ավարտին նախատեսվում է կատարել բացահանքի տարածքի ռեկուլտիվացիա: Ռեկուլտիվացման աշխատանքները նախատեսվում է կատարել 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական:

Ռեկուլտիվացիոն աշխատանքների ընթացքում նախ բացահանքի հատակում կփռվեն ժամանակակից առաջացումները, ապա դրանց վրա պայմանական հողային շերտը:

Տեխնիկական ռեկուլտիվացումից հետո նախատեսված է իրականացնել կենսաբանական վերականգնում: Կենսաբանական ռեկուլտիվացում կկատարվի լեռնային աշխատանքների պատճառով խախտված հողատարածությունների վերականգնված տարածքների վրա շահագործման ավարտից հետո, բացահանքի հատակի մակերեսը՝ 17450մ^2: Կենսաբանական ռեկուլտիվացման հաշվարկը իրականացվել է ըստ ոլորտում ընդունված գործակցի՝ 200 000 դրամ մեկ հեկտարի համար: 1.745հա x 200 000 դրամ/հա = 349000 դրամ: Ընդամենը ռեկուլտիվացման ծախսերը կկազմեն՝ 604.8+ 349.0 = 953.8հազ.դրամ:

Ընկերությունը բացահանքում կիրականացնի շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ /մակերևութային ջրեր, մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/, որոնց իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 150.0 հազ.դրամ:

Հանքավայրի շահագործումը իր դրական ազդեցությունն է ունենալու սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության իրականացման հարցում: Նախատեսվում է բացահանքում աշխատանքի մեջ ընդգրկել ազդակիր համայնքի բնակիչներին, կստեղծվեն նոր աշխատատեղեր: Նախատեսվում է նաև գյուղական ճանապարհների վերանորոգում, անապահով ընտանիքներին դրամական օգնություն, լավագույն աշակերտներին խրախուսում:

Եզրափակիչ մաս. Գեղարքունիքի մարզի Զովաբերի պեմզային ավազների հանքավայրի արդյունահանման աշխատանքների ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջներով:

Գնահատման և փորձաքննության փուլերում գործունեության իրականացման վերաբերյալ Զովաբեր համայնքում անցկացվել են չորս հանրային քննարկում, որոնց ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Մասնակիցների կողմից կարևորվել է հանքավայրի շահագործման ընթացքում փոշենստեցման նպատակով ջրցանի պարտադիր կատարումը, հանքավայրի շահագործման աշխատանքներում աշխատատեղերի ստեղծումն ու Ընկերության կողմից համայնքում սոցիալական ծրագրերի իրականացումը:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, պաշտպանության, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, Գեղարքունիքի մարզպետարանը, տեղական ինքնակառավարման մարմինները, որոնց կողմից ներկայացված կարծիքները ևս հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում և ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումներում:

ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի գործողությունների իրականացման դեպքում, գործունեության իրականացման ընթացքում աղտոտվածությունը օդային և ջրային ավազանների, հողային ռեսուրսների ինչպես նաև կենսաբազմազանության վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

1. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:
2. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել շրջակա միջավայրի, ինչպես նաև մարդու առողջության, անվտանգության և տեխնիկական անվտանգության ՀՀ-ում գործող նորմերի պահանջները:
3. Իրականացվող աշխատանքների ընթացքում պահպանել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:
4. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՇՄԱԳ հաշվետվությունում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական նախագծման նորմերի և բնապահպանական պահանջների կատարումը և ապահովել Զովաբեր համայնքում Ընկերության կողմից նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացումը:
5. Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՏՆԱՇԻՆ ԿՈՄՊ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Զովաբերի պեմզային ավազների հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
մասնագետ՝ Մ. Ավետիսյան

Ընդամենը՝ 7 էջ: